

ԱՅԲԱՐԱՏ ՈՂՋՈՒՆԱՐԵՐ

Ջարմիր Մուսայդ Արարատեան, ա՛ռ զքնարդ հոգնուազ
Արի կաց զքնդապէս ի վեհ լերին բարձրադիտակ,
Հուրջ յաջմէ և յահեկէ սրացիր ի թեւ արծուանման,
Եւ նշմարէ ուշի ուշով շիջեկավառ փառք տան Հայկեան.

Քանզի երկինք պայծառ սպիտակ
Նազելի դիմօք հայի յԱյրարատ,
Ողջոյն ցնծութեան նոր բաղդ յուսալիք
Ճախրէ ի Հայաստան սուրբ աջն Անեղին,

Ո՛վ քնարդ՝ հառաչախօս, լաց զգիմակդ սեօրակ,
Եւ արտասուաթոր զակունս քո արդ ճմլեր յարեան վտակ,
Լիավառ յոյսն Արամեան զքեզ փայլէր յաշտանակի,
Առկայծեալ որպէս ծրագ նուաղեցաւ ի տան անկեան:

Մատամբն երկնային լուսաւորի պիմ,
Լուսով զօրանայ աշխարհս համայն
Պատրոյկըն օծեալ սիրով ամահին,
Օծէ և զսիրտս Հայկեան զաւակին:

Ո՛վ ցնծութեան ժամ՝ գեղեցիկ, ո՛վ վայրկեան ուրախադիմ,
Զի՞ տեսիք ի Հայաստան յանցեալ աւուրս առաջին,
Այսպէս անշուք, և աւերակ, և ի պերճութեանց փառազուրկ,
Այսպէս տխուր, և սեւազատ զմանկտիս Հայկասերունդ:

Մուսայդ հոգերգու, ո՛չ այսպէս անշուք,
Ո՛չ այսպէս տխուր զՀայաստան սիրուն,
Այլ ծիծաղազարդ զլէմն չքնաղ
Յաւերժ ճոխանայր վիճակաւ անցաւ:

Հայեաց և տես շուրջանակի ընդ չորս ոլորտս Հայաստանի.
Զվիճակն երջանկական, և զփայլուն փառքն առաջին,
Որպէս էանց անշուքն եհաս, և կոծարան դարձաւ հանուր,
Եւ փարազոյր սեւ մթութեանց եկաւ պատեալ մակերևոյթ:

Արուսեակն Հայկայ շողայ յամպերաց,
Արուսեակն է այն Հայկական փառաց,
Այժմիկ երևի գեղեցիկ նշան,
Նշան միութեանց սրտից Հայկազեանց:

Ո՛վ դու գիշերային Արուսեակ արծաթագոյն քո սուրբ ճակատ
Սաց մի փայրիկ այսպէս պայծառ մի՛ թաղէր յամպս կապուտակ,
Քանզի զքեզ քաջ ծանեայ, ո՛վ դու իմ փաղեմի կորուստ,
Ե՛կ սեւազատ մէզ սրտիս, ե՛կ փարատիր ի վերուստ:

Արդ պայծառափայլ երևիս չքնաղ
Անհետ սրանաս չհայիս ի Հայս,
Գու աստղիկն ես մեր հզօր Հայկին
Տո՛ւր ինձ պատասխան յանցեալ վիճակէն:

Սրտառուշ կարգաց պատասխան առ իս ձայնեց զգպի՝
Զի՞ կաս առ իս ակնպիշ, ո՛վ դու Մուսայդ բարձրանիստ,
Աստղիկն եմ ես Հայկազանց, ինեւ անցին շատ հզօրք,
Անյաղթ բազուկք գիւցազանց ինեւ խաղայր յասպարէզ:

Յաղթող աստուծոյն Հայկն Յարէթորդին,
Քաջ հանդիսանայր ընդ հզօր բազկին.
Բազուկն Արամայ ի հանդէս խաղայր,
Թշնամեաց բանակ խաղալիք գառնայր:

„Տիրանն Երուանդածին և Հանճարեղ ըստ Քերթողին,
Ճոխ անուամբ Հանդիսանայր ի վիպասանս ժամանակին,
Սննկուն ի քաջ արանց, և աջակից մեծ արքային,
Ընդ նիզակին ընկերանայր և լեազրն փեսային.

Արտաշէս քաջին զործքն աստուածանայր,
Արեգակն երկնից ի յապուշ դառնայր.
Գոռայր յարեմուտս սասանէր Համայն,
Աւաղ՝ վիճակիս ի վախճան կարգայր:

„Վեհ Տրդատըն առիւծակերպ բարձրահասակն Արշակունի
Սրանայր արծուօրէն զողայր բեկոքն հիւսիսի,
Աջողակ աջոյ բաղկաւ միշտ անվկանտ ի մեծ մարտի,
Աւղղածիդ ի նպատակս քաջք, և հուժգու անկանէին.

Աշխոյժ արծուիք Սմբատ և Վարդան
Կորովիք արանց Մուշեղ և Վահան.
Այսպէս իմ որդիք քաջօր քաջացան,
Եւ ի Հայս թողին փառաց տեսարան:

„Վսեմ շինուած գերապան՝ Գահակալաց բազմարան,
Վաղարշապատն, Արմաւիր, չքնաղ Անին, Արտաշատ,
Ճոխանային մանկրտիւք, կայտառ արամիք գեղեցիկ,
Զօրէն վառվառ սուրբ քարանց բոլորէին շուրջ թագին

Հիւսքանչ կամար, ոսկեղէն պալատ
Նմանեալ երկնից զարդիւք պերճանայր,
Վարդարմատ Արեգն հիանայր յայնժամ
Ի ծագել իւրում փողփողէր համայն:

„Ուրախ զուարթ գեղափայլ ոսկիագոյն իմ ճաճանչ
Ծածանէի մշտապէս ի սիրտս որդւոց խանդակաթմ.
Թագազարգեալ իմ ձակատ պերճանայի փառաւոր,
Աշխոյժ որդիք Թորգոմեան կայտոռէին միշտ այն օր:

Անհետ սրացան ընդ ամաց բաղդին,
Մնաց յիշատակ մահարցանք նոցին.
Իմ յերես ածին սեւթոյր պաստառ,
Մնաց իմ բաժին ճակատադիր թշուառ:

„Պայծառ արեւ զիւցաղանց ի հորիզոն մարեցան,
Աղեւնաձև յաղթաբազուկք ամփոփեցան ի դամբան.
Երասխ, Մասիս ձիւնափայլ անջինջ փառացս նշանակ,
Իմ անտերունջ քաջ որդւոցս են յուշարար յախտեան:

Ասաց պաշաւ ի յամպս խաղաց,
Եւ վճիտ ճաճանչ առիս արձակեաց.
Գնա՛ ող Մուսայգ, գնա՛ յԱյրարատ
Ար ի Հայս կարգայ աւետեաց պատգամ:

„Ողջունաբերն Այրարատ աւետատու հայրենեաց,
Վսեմ ծնունդ մեր Վեհին ի Հայաստան երկնեաց,
Յազապատաց խանձարուր սիրոյ կաթմամբ գիեցոյց,
Գամ քան զգամ զօրանայ սիոփանաց ձայն կացոյց.

Ահա ես լուեմ, իմ սիրտս է ցաւոտ
Թող տայ աւետիս Այրարատ հզօր,
Օրերս վշտալի, խոցեր ես վաղեմի
Որչափ աստ յամես ցաւերս նորոգին:

Եռ քիզ հրաւեր ողջունի՝ առ քիզ կարդամ Հայաստան
Սեւապսակ վայրեօքրդ ցնծա՛ սրտիւ մանկական.
Սիրոյ զրոշակ սրբափայլ հովանացեալ ծածանի,
Պահէ՛ զորդիս անվնաս զինչ թեւարաց արծուի:

Ժամք տգիտութեան չքանան պիտի
Ճառագայթք ուսմանց ծածանին հեղիկ
Ունկունք Արամեանց ի պարտեզ շրջին
Այլազան ծաղկօք պսակ յօրինեն:

Երգեմ քեզ նոր սիրոյ ողջոյն տամ հին վշտացդ սփոփանք,
Մեղրանուշ մեղուն ձայնակից մեղր տայցենք քո մանկանց,
Յաշխարհաճեմ մշտապէս, թեւակցեալ սիրարար
Միշտ գեղգեղեմք զպատգամս յունկս որդւոցդ անդադար:

Եւ, կրկնագիրն ի սիրոս Հայութեան
Շաղկապէ անկոյժ սիրտք օտարացեալ,
Սիրտք տատասկարեր զսէրս յղանայ,
Սիրոյ սուրբ բողբոջ աճումն զօրանայ:

Կաթուղիկէն յամպաճեմ, պայծառափայլ զերդ Արփի,
Ըքեղակերտ յօրինուած և բազմարան մեծ վեհիս,
Բազկատարած յարաժամ և յերկինս բարեմաղթ,
Միշտ հայցելով ի յէկն առնել որդւոցս բարեբաղդ:

Մեր սուրբ դիտապետ շուք Հայաստանի,
Երկինք պարգեւէ Հայկազանց սեռի
Քաջարթուն Հովիւ Գեորգ Աւհարաւ,
Գահակալ արի, Պաշտպան Հայրենեաց:

Սովաւ քարձցի սուրն օղապար ընդ ձախմէ կոյն Հայաստանիդ
Սովաւ բարձցի բուռն բազուկ. ազատարար փրկանք Ազգիս.
Սովաւ բարձցին տգիտութիւնք, պայծառ ծագի ուսման գարուն
Ի բուրաստանս մտաց արտից ցեղատեսիլ փթթին ծաղկունքն:

Երուեստ գիտութիւնք ի քեզ երեխն
Կարթացեալ արտից կրթիչ գեղեցիկ.
Զեփիւռ երկնային արի հեղաշունչ
Հոտաւէտ բուրեն թերթարաց ծաղկունք:

Սովաւ ճախրին փառքն Արամեան յանխառունակ յերկիրս Հայ
Սովաւ պճնի փողփողենէջ փառակորոյս վսեմ ճակատ.
Սովաւ լիցին բարեխափիկ ակրազգեցիկդ Հայաստան.
Փառազարդեալ պերճամաս պիտմ և միշտ և յաւիտեան:

Օն անդր իմ որդիք յառաջ ընթացէք
Միութեան սուրբ կապ հաստատ սրահեցէք,
Զեզ կոչէ երկինք սուրբ եղբայրութիւն,
Կացէք զուք յայս սէր յաւերժ հաստատուն:

Լեւոն Ոսկանիի եւ Ե. Յարութիւնեանի